(անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսերը

Օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 192-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, դատարանը գտնում է, որ այն ենթակա է լուծման՝ ղեկավարվելով ստորև նշված նորմերով և հիմնավորմամբ.

Օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ 1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ, 188-րդ, 189-րդ, 192-րդ, 194-րդ, 234.12-րդ և 362-րդ հոդվածների պահանջներով, Դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության տնօրեն Ալբերտ Ասատրյանի ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 05.05.2023 թվականին հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2023 թվականի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2-րդ և 2.1-րդ կետերով կայացված՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու, նույն արձանագրության 2.2-րդ կետով «Սմարտ Աուդիտ» ՍՊ ընկերության ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 05.05.2023 թվականին հայտարարված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2023 թվականի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.2-րդ և 2.1-րդ կետերով կայացված՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու, նույն արձանագրության 2.2-րդ կետով «Սմարտ Աուդիտ» ՍՊ ընկերության ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումները ճանաչել անվավեր:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՇԻԼԱՋՅԱՆ